ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՎԱՐՏԱԿԱՆՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանեկան միջոցառումների դերը երեխաների գեղագիտական դաստիարակության գործում:

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Դավթյան

ՈՒսումնական հաստատություն՝ Ք. Ալավերդի Կ.Դոլինյանի անվան N11 միջնակարգ դպրոց

Լոռի- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն

2.Գեղագիտական դաստիարակություն

Գլուխ 1. Երեխայի գեղագիտական- գեղարվեստական դաստիարակությունը

Գլուխ 2. Երեխայի գեղագիտական դաստիարակությունը ընտանիքում

3. Եզրակացություն

4. Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մտածող և զարգացող մարդ դաստիարակելու համար, անհրաժեշտ է առաջին հերթինրան դաստիարակել գեղագիտորեն»: Ֆրիդրիխ Շիլեր

Գեղագիտությունը՝ էսթետիկական (լատիներեն՝ Aesthetica, հին հունարեն՝ aisthetikos՝զգայական ընկալում), որպես գիտություն ինքնուրույն ճյուղ առանձնացել է 18-րդ դարում:Գեղագիտական դրսևորումներն առկա են ոչ միայն արվեստում,այլև բնության մեջ,հասարակական կյանքում,նյութական արտադրության մեջ և աշխարհի ընկալման ու վերարտադրման այլ դրսևորումներում: Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգա-ցումների,կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի,գեղագիտական գիտակցության ձևավորմանը:Դաստիարակության խնդիրն է դաստիարակվողների գեղագիտական մշակույթի, գիտակցության, ընկալումների, պատկերացումների, դատողությունների, մտածողության,ճաշակի, համոզմունքների, իդեալների, արժեքների ձևավորումը:Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները:Այն կարևոր տեղ ունի երեխաներդաստիարակության համակարգում և նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը:

Թեմայի արդիականություն:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է զարգացնելու երեխայի գեղագիտականկուլտուրան ու ճաշակը:

Աշխատանքի նպատակը:

ՈՒսումնասիրել և մանրամասն ներկայացնել երեխայի գեղագիտական դաստիարակությունը ընտանիքում:

Խնդիրները:

Թեմայից բխում են հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել գեղագիտական զարգացման դերն ու նշանակությունը:

2. Վեր հանել ծնողի, դաստիարակի, ուսուցչի դերը գեղագիտական ընդունակություններիզարգացման գործում:

3. Վերլուծել ընտանիքի ազդեցությունը երեխայի գեղագիտական դաստիարկության գործում:

4. Աշխատանքը կազմված է՝ բովանդակությունից, ներածությունից, 2 գլուխներից,եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

<<Չի կարելի ճանապարհ տալ սերնդին առանց դրականի և գեղեցիկի սաղմերի:>>

Ֆեոդոր Դոստոևսկի

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ aisteticos-զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգար-տենի կողմից), սակայն որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղվածողջամ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում:Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը:Գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անբաժանելի մասը:Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն,ամենահետաքրքր- քիր ու գրավիչ երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկը:Եվ բնականաբար, գեղեցիկի ձևավորու-մըբոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն

բաղադրիչ:Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ծառանգաբար:Բայց դրանց

ձևավորումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը թերևս հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով:Իսկ ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ

բացակայում են միասնական մոտեցումը, և տարբեր հեղինակների կողմից այն բը-նորոշվում էտարբեր կերպ.

- որպես իրականության նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերությանձևավորման նպատակաուղղված գործընթաց
- որպես շրջակա աշխարհի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծմանունակությունների

զարգացում

- որպես իրականության նկատմամբ մարդու որոշակի գեղագիտական հարաբերությանձևավորում
- որպես անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրանհամապատասխան

գործունեության ձևավորման գործընթաց և այլն:

Նկատվող այս անհստակության, ոչ միասնական մոտեցման հիմնական պատճառները երկուսնեն՝ անհստակությունը և ոչ միասնական մոտեցումը, ինչպես գեղեցիկի, այնպես էլ դաստիարակության բնորոշ հարցերում:Գեղագիտական դաստիարակությունը բնութ յան և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է:Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է:Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները,

ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների , կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում, բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկըընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները:

Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրաստեղծագործական ունակությունները:Այն իրականացնում է երկու հիմնական գործառույթ.

1. ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը
2. զարգացնում է նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը

Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է գեղեցիկը:Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար: Ընդհանրապես գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ:Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է հայ պատմիչ, փիլիսոփա Եզնիկ Կողբացին:

Նա գտնում էր, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն: Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել ենբոլոր ժամանակների

հետազոտողների ուշադրության կենտրոնում:Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակությանմեջ:Հայտնի է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական

դաստիարակվածության մակարդակ:Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավորէ դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական,բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:

1.1ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ- ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների դաստիարակության համակարգում կարևոր տեղ է ունի գեղագիտական դաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպվածմանկավարժական գործընթաց է, որն ուղղված է երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը:Գեղագիտական դաստիարակությունը նպաստում երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը, բացահայտում է նրա ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը:Նախադպրոցական, հատկապես ավագ նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները կարող ենք բաժանել երկու խմբի: Առաջին խմբի խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցությանձևավորմանը: Դրանք են.

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը.
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակությանձևավորումը.
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը.

- գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը.
- գեղագիտական ճաշակի դաստիարակությունը:

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտա-գեղարվեստական ընդունակություն- ների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը: Այս տարիքում այդպիսի խնդիրներ կարող են լինել նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը.

- ծեփակերտման ունակությունների և կարողություններիձևավորումը.
- ապլիկացիայի ուսուցումը.
- կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- երաժշտական ընդունակությունների զարգացումը, երաժշտա-ռիթմիկ կարողություններիձևավորումը,
- պարարվեստի տարրերի ձևավորումը,
- արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուրգաղափարների փոխանցումը,
- գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքիձևավորումը:

Բարեկիրթ և գեղագիտական ճաշակով ստեղծված միջավայր

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:

Հայրենի բնության գեղագիտական ազդեցությունը

Գեղագիտական դաստիարակությանը նպաստող ամենալավ միջավայրը հայրենի բնությունն է: Գեղագիտական դաստիարակության կարևորագույն պայմաններից է բնության հետ երեխա-յի շարունակական շփման ապահովումը:Հայրենի բնությունն իր ազգամշակութային բազմա- դարյա շերտով, բարակերտ և ձեռակերտ կոթողներով, ազգի պատմությամբ, լեզվով և կենցա- ղով ընդհանրական ձևով հիմք է հանդիսանում գեղագիտական դաստիարակության համար:

Ժողովրդական բանահյուսության

Հատկապես հզոր է ժողովրդական բանահյուսության (հեքիաթների, շուտասելուկների, սուտասելուկների, հանելուկների,ասացվածքների, խաղիկների և ծեսերի) ներգործությունը: Հեքիաթների երևակայական կերպարները ներառում են բարու և չարի հավաքական նմուշներ,բարոյականության և գեղեցկության տարրեր,որոնք ընդհանրացված ձևով նպաստում են երեխայ կողմից երկրային կյանքի իմաստավորմանը, իրական կյանքում բարու և չարի տար- անջատմանը:

Ինքնուրույն գեղարվեստական գործունեությունը

Երեխայի գեղագիտական զարգացմանը լավագույնս նպաստում է ինքնուրույն գեղարվեստա-կան գործունեությունը: Գեղարվեստական գործունեությամբ ինքնուրույն զբաղվելու ւկարողությունը զարգանում էաստիճանաբար, անցնելով ձևավորման երեք փուլ.

- վերարտադրող (ռեպրոդուկտիվ) գործունեության ձևավորում,
- ստեղծագործական բնույթի, մեծահասակների հետ համատեղ գործունեությանձևավորում,
- ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորում, որն աստիճանաբարվերածվում է

ստեղծագործության:

Գեղագիտական դաստիարակության միջոցները բազմազան են:

Առաջին հերթին կարևորվում է ուսումնական գրեթե բոլոր առարկաների կրթության բովան-դակությունները՝ գեղագիտական դաստիարակության հզոր ներուժով:

Այնուհանդերձ կրթական համակարգում գեղագիտական դաստիարակության նպատակա- ուղղված իրականացման

կարևոր միջոց է «Արվեստ» ուսումնական բնագավառը, որը տարրական դպրոցում կայացվում է «Տեխնոլոգիա» բնագավառի հետ ինտեգրված, իսկ միջին դպրոցում՝ առանձին առարկաներով:Արվեստի դասավանդումը նպաստում է սովորողի ինքնահանաչմանն ու ինքնաարտահայտմանը, նրա մտահորիզոնի ընդլայնմանը,երևակայու- թյան, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, դեղագիտական հա- շակի, բարոյական բարձր չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանն ու կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական

վերաբերմունքի դրսևորմանը:Գեղագիտական դաստիարակության ազդու միջոց են մարդուիմացական-հանաչողական գործունեությունը, բ ն ո ւ թ յ ո ւ ն ը , Զ Լ Մ-ն ե ր ը , ա ր վ ե ս տ ը ,ա ռ ա ջ ա ն ե ր ը , ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն բ ա ն ա հ յ ո ւ ս ո ւ թ յ ո ւ ն ը , աշ խատանք ը , խաղ ը ,մ ի ջ ա ն ձ ն ա յ ի ն հ ա ր ա բ ե ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը հ ա ղ ո ր դ ա կ ց ո ւ մ ը , ազ գ ա յ ի ն և հ ա մ ա մ ա ր դ կ ա յ ի ն ա վ ա ն դ ո ւ յ թ ն ե ր ը , ս ո վ ո ր ո ւ յ թ ն ե ր ը , ի դ ե ա լ ն ե ր ը : Սովորողների գեղագիտական դաստիարակության գործում անգնահատելի է բնության դերը:Բնության նկատմամբ մարդու վերաբերմունքը վկայում է մարդու ընդհանուր մշակույթի ձևավորվածության մասին, մարդ-բնություն հերդաշնակությունը գեղագիտական դաստիարակության կարևոր պայման է:Կարևոր նշանակություն ունեն արվեստի ստեղծա- գործությունների նկատմամբ հետաքրքրությունը, դրանց ճանաչումն ու գնահատումը,ընթեր- ցանությունը, մեծատաղանդ արվեստագետների կյանքի ու ստեղծագործության իմացությու- նը:

Գեղագիտական դաստիարակության ձևեր և մեթոդներ են՝

զրույցը, դասախոսությունը, բանավեճը, ցուցադրումները, հանդիպումները, էքսկուրսիաները, ընտանեկան, ուսումնական, հանրային տարաբնույթ միջոցառումները, տոնակատարությունները, այցելություններ մշակութային օջախներ և այլն:

Կրթական գործընթացում գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:Կրտսեր դպրոցականի հետաքրքասիրությունները և հաուզական ապրումները բավականաչափ խոր և բազմազան չեն, արվեստի ստեղծագործության ընկալումը նրա համար դժվար, հաճախ նույնիսկ անհաս-կանալի է:Այս տարիքում խորացվում են գեղագիտական պատկերցումների հիմքերը,արվես-

տի ստեղծագործությունների առանձին կողմերի, գույների,ներդաշնակ ձևերի վրա ուշադրությունը սևեռելու, գեղագիտական կողմերն ընկալել, գնահատել տալու դպրոցականի մտացական, հուզական ընկալման վրա ներգործելու, գեղագիտական հույզեր ու զգացումներ արթնացնելու ուղղությամբ:

Կրտսեր դպրոցականի կենսամիջավայրի բոլոր բաղադրիչները պետք է գեղեցիկ պահանջմունք ձևավորեն, կրթեն ու դաստիարակեն:Դեռահասության կենսափուլում դրվումեն գեղագիտական մտածողության հիմքերը. դեռահասն ունի բավականաչափ գիտելիքներ, որոնց միջոցով ըմբռնում է շրջապատող աշխարհի երևույթները, փորձում է թափանցել իրերի, երևույթների խորքը, գնահատել, իմաստավորել, իր մեջ ձևավորել այս կամ այն երևույթի արժևորված չափանիշներ:

Ավագ դպրոցական տարիքում ամրապնդվում են գեղագիտական գիտակցության հիմքերը. կայունհայացքների, համոզմունքների, ձևավորված աշխարհայացքի շնորհիվ պատանին կարողանում է գիտակցված ձևով ընկալել կյանքի գեղագիտական կողմերը, հարաբերությունները, համարժեք ընտրություն կատարել և հիմնավորել այն, առաջնորդվելգեղեցիկի, ներդաշնակի, կատարյալի չափանիշներով:

Պատանու կենսագործունեությունը պետք է նպատակաուղված լինի տավոր, բարոյական, գեղագիտական, հոգևոր ներդաշնակությանը և աշխարհի հետ գեղագիտական հարաբերությունների ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 2

ԵՐԵԽԱՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ընտանիքից է սկիզբ առնում մարդու ճանապարհը դեպի գեղեցիկի աշխարհը:Ուստի շատկարևոր է ընտանիքի դերը

երեխայի գեղագիտական դաստիարակման գործում:

Հետաքրքրությունը դեպի գեղեցիկը այն հասկանալու, սիրելու և գնահատելու, նրանարձագանքելու ընդունակությունը մարդու բնածին հատկությունները չեն:Այդ հատկությունները մարդու մեջ հանդես են գալիս վաղ մանկության հասակում և բարենպաստ պայմանների դեպքու աստիճանաբար զարգանում են:Ծնողները պետք էհասկանան, որ չի կարելի անուշադրության մատնել գեղեցիկի ընկալմամբ արտահայտությունները նրանք պարտավոր են դա նկատել և աստիճանաբար զարգացնելերեխաների մեջ:Այս ամենը առիթ է դառնում հիշելուն Ա.Չեխովի հանրածանոթ խոսքերը, թե մարդու մեջ ամեն ինչ և՛ դեմքը, և՛ հագուստը, և՛ մտքերը պետք է գեղեցիկ լինեն:Իսկ ո՞րն է գեղեցիկը, ինչպե՞ս է նա երևան գալիս կյանքում, մարդկային հարաբերություններում, ինչպե՞ս կյանքը դարձնել իսկապես գեղեցիկ, ինչպե՞ս առաջացնելերեխայի մեջ գեղեցիկն իր բոլոր կողմերով ընկալելու, զգալու, սիրելու և գնահատելու, այն կյանքի ու աշխատանքի մեջ ներդնելու ունակություն--- ահա երեխաների գեղագիտական դաստիարակության նպատակն ու խնդիրները, որոնք դրված են ընտանիքի առաջ:Անհրաժեշտ է երեխայի գիտելիքները հարստացնելու շրջապատը ավելիուշադիր դիտելու, տեսածի մեջ բնորոշը, հատկանշականը գտնելու համար:

Գեղագիտական դաստիարակությունը ընտանիքում կապված է երեխաների արտաքինի և վարքի կուլտուրայի նկատմամբ ցուցաբերվող որոշակի պահանջների հետ այդպիսի անվիճելի պահանջների են՝ մաքրությունը, խնամքով հագնվելը, կոկիկ սանրվածքը, լավկեցվածքը, խոսքի կուլտուրան, վերջապես այնպիսի մանրուքներ, ինչպես սեղանի շուրջիրեն պահել կարողանալը, դանակ պատառաքաղից ճիշտ օգտվելը և այլն, որոնց նկատմամբ ծնողը իրավունք չունի անտարբերություն հանդես բերել:Այս պահանջների կողքով անցնել, նշանակում է անհրաժեշտ շահագրգռվածություն հանդես չբերել երեխայիճաշակի և գեղեցիկ վարքի զարգացման գործում:

Վարժեցնելով երեխաներին մաքրասիրության դաստիարակելով նրանց մեջ հիգենիկտարբրական ունակություններ, դրանով իսկ ծնողներն առաջին քայլերն են անում երեխաների գեղագիտական դաստիարակության գործում:Վատ տպավորություն են թողնումդպրոցականի դասագրքերը, պատառոտված տետրերը, ջարդոտված գրենական պիտույքները: Հաճախ ծնողները, շատ սահմանափակ պատկերացնելով գեղագիտական դաստիարակության էությունն ու

նպատակը, միայն հոգ են տանում, որ բնակարանը շքեղ կահավորված լինի, երեխայի հագուստը նորաձև, սանրվածքն էլ գեղեցիկ լինի, անտեսելով,որ գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է բարոյական դաստիարակության հետ, որ երեխայի մեջ լավ ճաշակը երևան է գալիս՝ ընդհանուր զարգացման հետ:Լավ ճաշակին բնորոշ է՝ բնականը, համեստը, հարմարավետը, նուրբը:Լավճաշակը նպաստում է մարդու կյանքն ավելի հետաքրքիր, բովանդակալից, հարուստ և ուրախ դարձնելու:Վատ ճաշակի տեր մարդու համար բնորոշ է կեղծը, անբնականը, դեպիայն ամենը, ինչ անմջապես աչքի է զարնում, վայրկենական ազդեցությունն ունենում զգացմունքների վրա,սակայն զուրկ է խորը մտքերից, հարուստ ապրումներից:Երեխայի գեղագիտական դաստիարակության մեծ հնարավորություններ կան նրա շրջապատում:Այստեսակետից կարևոր նշանակություն ունի ծնողների և շրջապատի չափահաս անձնավորությունների անկեղծ, ստեղծագործ աշխատանքը, երեխան տեսնում է, թե ինչպիսի սիրով են շրջապատի մարդիկ վերաբերվում աշխատանքին, ինչպես են նրանք աշխատանքի մեջ դնում իրենց գիտելիքները և կարողությունները ամբողջ հոգով աշխատում են իրենց երազանքները իրականացնելու համար, ապա նա համոզվում է, որ մարդ ամենից առաջ գեղեցիկ և երջանիկ է իր աշխատանքով, գեղեցիկ է այն մարդը, որը ակտիվ մասնակցություն ունի հասրակական կյանքին:Սերը դեպի բնությունը մարդու մեջառաջանում է նրա հետ շփվելու, նրա մեջ տեղի ունեցող փոփոխությունները դիտարկելումիջոցով:Երբ ծնողը փոքր հասակից երեխաներին տանում է զբոսանքի, հաճախ են լինումդաշտում, անտառում հիանում են ծաղիկների, տերևների գույներով տեսնում են գեղեցիկ արևածագը, տեսնում են, թե ինչպես է ձյունը զարդարում ծառերը:Ծնողների պատկերավորխոսքերը գրավում են երեխաներին, օգնում նրանց ավելի խորը զգալու բնությունը, և այլ կերպ տեսնելու բնության երևույթները:

Բնության նկատմամաբ երեխաների մեջ սեր և հետաքրքրություն դաստիրակելուն նպաստում են նաև բնանկարները:Նա, ով զգում բնության գեղեցկությունը, հիանում է գարնան անձրևով, ուրախանում է, երբ տեսնում էձյան առաջին փաթիլները, արևածագն ու բոսոր վերջալույսը, ամբողջ հոգով զգում է ամառվա պարզ երկնքի գեղեցկությունը, նա ապրում է ավելի հարուստ կյանքով քան այնմարդը, որն անտարբեր է անցնում բնության գեղեցկության և հրաշալիքների կողքով:

Երեխայի վրա մեծ ազդեցություն ունի կենցաղի գեղեցկությունը, նա ընդգրկում է շատ հարցեր՝ երեխայի

աշխատանքը ընտանիքում, բնակարանի գեղեցիկ կահավորումը, ընտանի-քի անդամների նիստուկացը փոխհարաբերությունները, ընտանեկան տոները և այլն:Երեխաների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու համար կարևոր պայման է նրա կատարած յուրաքանչյուր աշխատանքը:Երեխաներին պետք է հանձնարարել հաշասեղան պատրաստել, ամանները լվանալ, անկողինը հարդարել և ծնողները պետք է ուշադրություն դարձնեն կատարված աշխատանքի գեղագիտական կողմի վրա:Աշխատանքիգեղեցկությունը երեխային հասկանալու դարձնելու համար կարևոր է չափահասների կողմից հանդես բերել սիստեմատիկ հսկողություն, համառ ուշադրություն, նրա աշխատանքի կատարման եղանակի, որակի նկատմամբ, անձնական օրինակով, խոսքով, մանկավարժական ճիշտ տակտով ներգործել երեխայի վրա:Երեխաների կյանքը գեղեցիկ, հաճելի են դարձնում ընտանիքի չափահաս անդամների ջերմ փոխհարաբերությունները, նրանց հավասարակշռությունը, զսպվածությունը և ընդհանուրակը, ծնողների հյարդային,անհանգիստվիճակը, երեխայի աչքում զցում է ընտանիքի ջերմությունը:Երեխայի մեջ գեղեցիկ զգացմունքներ դաստիարակելու գործում մեծ դեր են խաղում ընտանեկան տոները:Այն ընտանիքները, որտեղ տրադիցիա է դարձել բովանդակալից, հաճելի անցկացնելու յուրաքանչյուր տոնը, տոներին սեղանիշուրջ է հավաքում ամբողջ ընտանիքը, հարազատները, ընկերները:Երեխաները երգում են պարում,խաղում, կատակում: Ծնողների ակտիվ մասնակցությունը ավելի հաճելի, հետաքրքիր է դարձնում նրանց ուրախությունը: Այս ընտանիքում բոլոր երեխաները վարժվել են հյուրասիրության,նրանք զգում են բարեկամների, ընկերների հետ շփվելու հաճույքն ու բավականությունը:

Գեղագիտությունը կենցաղում ինքնանպատակ չէ, այն մարդու կյանքը ավելի գեղեցիկ, գրավիչ,հետաքրքիր և ուրախ դարձնելու կարևոր միջոց է:Ընտանիքի ապրելակերպը, ընտանեկան տրադիցիաները,հնարավորություն են ստեղծում երեխայի մեջ դաստիարակել ազնվություն , մարդասիրություն, հոգատարություն և բարոյական այնպիսի այլ հատկություններ, որոնք մարդուն դարձնում են գեղեցիկ, առաքինի: Երեխաների գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց էնրանց՝ արվեստի օգնությամբ դաստիարակելը:Այս հարցում մեծ դեր է կատարում ընտանիքը:Արվեստի օգնությամբ երեխաներին դաստիարակելը կնպաստի նրանց գեղագիտական ընկալումների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:Ուշադիր ծնողներն անպայման նկատում են այն մեծ ազդեցությունը,

որ ունենում են երեխաների վրա գրքերի, կինոֆիլմերի, ներկայացումների դրական հերոսները և մտահոգվում են, ոչպեսզի այդ գործերը ավելի խոր հետքթողնեն երեխաների վրա;Հատկապես մեծ է գեղարվեստական գրականության ազդեցությունը:Գրքերի ընթերցանությունը զարգացնում է երեխայի երևակայությունը, առաջացնում նրա մեջ գեղագիտական ապրումներ:Երեխայի գեղարվեստական գրականության ընթերցանությունընճիշտ կազմակերպելու գործում կարևոր դեր են խաղում ծնողները:Երեխայի մեջ ընթերցասիրությանդաստիարակությունը ծնողի կարևոր պարտականություններից մեկն է:Մարդու կյանքը գեղեցկացնելու և հարստացնելու զորեղ միջոցներից են կինոն և թատրոնը:Դիտած ֆիլմերը և ներկայացումները հարստացնում են մարդուն բարոյապես, նպաստում են նրա կամքի, զգացմունքների ձևավորմանը, բարձրացնում նրա մեջ կյանքում ճիշտ կողմնորոշվելու ընդունակությունները, օգնում ավելի ճշգրիտ ու խորը զգալու, ավելի լավ հասկանալու գեղեցիկըկյանքում, արվեստի մեջ, առաջացնում բացասական վերաբերմունքը դեպի տգեղը:Ծնողներին ամենից առաջ պետք է հուզի այն հարցը, թե ինչ հաճախականությամբ պետք է դիտեն երեխաներըկինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, և ինչ պետք է դիտեն:Եթե երեխան չափից ավելի հաճախէ կինո, թատրոն գնում, նա գերծանրաբեռնվում է:Այդ կարող է խանգարել դասերը սովորելուն, վատ ազդել նրա դեռևս անբավարար զարգացած նյարդային համակարգի վրա:Շատ երեխաներ դիտում են ֆիլմեր, նույնիսկ այնպիսիններները, որոնք արգելված են նրանց համար:

Ընտանիքում երեխաների գեղագիտական դաստիարակության զորեղ միջոցներ են երգը և երաժշտությունը:

Երաժշտական ընկալումները երեխայի մոտ շատ վաղ են զարգանում:Իր կյանքի առաջին իսկ ամիսներից երեխան հաճույքով է ընկալում օրորոցային երգերը, լսում է պարզ մեղեդիներ, հաղորդակից դառնում երաժշտական արվեստին:Երգը և երաժշտությունը ուրախ են դարձնում երեխայի կյանքը, հարստացնում միտքն ու զգացմունքները:

Գեղեցիկ զգացմունքների և վարքի դաստիարակության կարևոր բնագավառներ են կերպարվեստը և կիրառական արվեստը: Ճիշտ են վարվում այն ծնողները, որոնք պայմաններ են ստեղծում, որ երեխաները հետաքրքրվեն գունանկարչությամբ, քանդակագործությամբ և կիրառական արվեստի զանազան տեսակներով:

Գեղագիտական դաստիարակության մեծ հնարավորություններ են ստեղծում ֆիզկուլտուրան, սպորտը,

գեղարվեստական մարմնամարզությունը: Դրանք նպաստում են երեխայի ֆիզիկական զարգացմանը, նրան դարձնում են ճկուն, նպաստում մարմնի, շարժումների, քայլվածքի գեղեցկացմանը, դաստիարակում են երեխայի ճաշակը, գեղեցիկի լրիվ և ճիշտ հասկացողությունը: Երեխայի մեջ վաղ հասակից ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ սեր ու հետաքրքրություն առաջացնելով ծնողները հնարավորություն կստեղծեն երեխայի համար դրանցով զբաղվելու, մտնելու գեղեցիկի կախարդական աշխարհը, ուրախանալու Երեխաների , ոգեշնչվելու նրանով:

Երեխաների գեղարվեստական դաստիարակության բնագավառում ծնողների շրջանում նկատող սխալներից է, երեխաների ընդունակությունների գերագնահատումը, նրանց ձեռք բերած ամեն մի հաջողության չափից ավելի ընդգծումը և բոլորի համար դրանք տեսանելի դարձնելու ձգտումը:Այսպիսի ծնողները չեն նկատում,որ այդ կերպ նրանք երեխաների մեջ առաջացնում են փառասիրություն, մեծամտություն, զրկում են նրանց իրենց ձեռք բերած հաջողությունները օբյեկտիվ կերպով գնահատելու հնարավորությունից:

Ծնողը պարտավոր է նկատի երեխայի հաջողությունները, սակայն այն պետք է խրախուսվի տեղին և զուսպ կերպով:Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի գեղագիտական դաստիարակվածություն և կրթվածություն:

Վ. Գ. Բելինսկին ասում էր «Աշխարհը կարելի է ճանաչել երկու ուղիով՝ գիտության և արվեստի»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով գեղագիտական դաստիարակողի ու դաստիարակվողների համատեղ գործունեության գործընթաց է՝ դաստիարակվողների դաստիարակությունը գեղագիտականկուլտուրան ձևավորելու համար:Գեղագիտական դաստիարակությունն անձի ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է. գեղեցիկին առնչվելու, գեղեցիկի չափանիշներով

առաջնորդվելու, գեղեցիկը գնահատելու կարողությունների ձևավորումը դաստիարակությանառաջնահերթություններից է:Գեղագիտական դաստիարակվածությունը որակ է՝ կյանքը կառուցելու գեղեցիկի օրենքներին համապատասխան,գեղագիտական հարաբերություններ հաստատելու հասարակության, բնությամբ, աշխարհի նկատմամբ:Գեղագիտական ճաշակը գեղեցիկը զգալու, գնահատելու ընդունակությունն է, գեղեցկության չափանիշները հասկանալու կարողությունը, գեղեցիկի նկատմամբ հուզական զգայունականությունը:Կրթական գործընթացում գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:Գեղագիտական դաստիարակության միջոցները հնարավորություն են ընձեռնում ուսուցիչ-դաստիարակի սովորողների մեջարթնացնելու ստեղծագործական հետաքրքրություններ, զարգացնել նրանց գեղագիտական կուլտուրան և գեղագիտական ընդունակությունները:Շատ մեծ տեղ է գրավում երեխաների գեղագիտական զարգացումը ընտանիքում:Ընտանիքից է սկիզբ առնում մարդու հանապարհը գեղեցիկի աշխարհ, ուստի կարևոր է, որ ծնողները շատ խորը ըմբռնեն այս ուղղությամբիրենց անելիքները: Ընտանիքի ապրելակերպը, ընտանեկան տրադիցիաները հնարավորություն են ստեղծում երեխայի մեջ դաստիարակել ազնվություն, մարդասիրությունհոգատարություն և բարոյական այնպիսի այլ հատկություններ, որոնք մարդուն դարձնում են գեղեցիկ, առաքինի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՅՈՒ. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան /Մանկավարժություն 2004/ էջ 368- 374

2. Ն. Ե. Կովալյով, Բ. Ֆ. Ռայսկի, Ն. Ա. Սորակին /Մանկավարժության ներածություն/1997/ էջ134-137

3. Օ. Ղարիբջանյան /Ծնողը և երեխան/1968/ էջ 214-232

4. Հ. Միքայելյան /Գիտամեթոդական ամսագիր/ Գեղագիտական դաստիարակություն/2016/էջ3-10